



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

« 22 » « սեպտեմբեր » 2023թ. № 336-ձ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 275-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության նեքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 275-Լ հրամանի հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ գլխով.

«VIII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

58. Հայաստանի Հանրապետության դրոշը պետք է լինի ամբողջական, մաքուր և չգունաթափված:

59. Հայաստանի Հանրապետության դրոշի երկարության հարաբերությունը դրոշածողի երկարության նկատմամբ կարող է լինել 1:1,7-ից ոչ պակաս:

60. Հայաստանի Հանրապետության դրոշը ուղղահայաց դիրքով կախելու դեպքում պետք է ժամացույցի սլաքի ուղղությանը հակառակ 90 աստիճանով շրջել այնպես, որ դեմքով դեպի դրոշը կանգնելիս կարմիր, կապույտ, նարնջագույն գույների հերթականությունը ձախից աջ չխախտվի:

61. Բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշի ներքևի մասը պետք է գտնվի գետնից 2,5 մետրից ոչ պակաս բարձրության վրա:


62. «Հայաստանի Հանրապետության դրոշի մասին» օրենքով սահմանված կարգով մշտապես բարձրացված Հայաստանի Հանրապետության դրոշը գիշերային ժամերին պետք է լուսավորվի:

63.Սույն Կանոնների 58-62-րդ կետերով լրացվող Հայաստանի Հանրապետության դրոշին ներկայացվող պահանջների պահպանման պարտականությունը դնել շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալի վրա»:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

9/22/2023

X



ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«22» սեպտեմբերի 2023թ.
ք.Երևան